Development Foundation of Armenia

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

առ 01.10.2017 թվական (9-ը ամիս)

2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Գործարար համաժողովների (ֆորումների), ինչպես նաև այլ համանման միջոցառումների մասնակցություն և կազմակերպում 3

II. Մշակող արդյունաբերության ոլորտների ընկերություններին օժանդակության ցուցաբերում՝ ֆինանսական գործիքների կիրառմամբ 11

III. Հայկական ապրանքների՝ նպատակային շուկաներում առաջմղում, հայկական ապրանքների ներկայացում, շուկայական տեղեկատվության ապահովում 12

IV. Ուսումնական դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում. 20

V. Արտահանման բնագավառում ծագող խնդիրների և դրանց լուծմանն ուղղված հետազոտության իրականացում. 20

I. Գործարար համաժողովների (ֆորումների), ինչպես նաև այլ համանման միջոցառումների մասնակցություն և կազմակերպում

- 2017 թվականի մարտի 22-ին Աբու Դաբի քաղաքում՝ Աբու Դաբիի Առևտրի պալատի հետ համատեղ, կազմակերպվել է **«Հայաստան-Արաբական Միացյալ Էմիրություններ» ներդրումային համաժողով**, որին իրենց մասնակցությամբ պատվել են ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը և Աբու Դաբի էմիրության թագաժառանգ, ԱՄԷ Զինված ուժերի գլխավոր հրամանատարի տեղակալ Շեյխ Մոհամմեդ բին Զայեդ Ալ Նահյանի:

Միջոցառումը համախմբել էր հայ և արաբ շուրջ 300 մասնակիցների, այդ թվում՝ պետական պաշտոնյաներ, հիմնադրամների ղեկավարներ, վերազգային ընկերությունների, միջազգային կազմակերպությունների, Հայաստանում օտարերկրյա ներդրումների հաջող փորձ ունեցող ընկերությունների ներկայացուցիչներ:

Համաժողովին ներկայացվել են շնորհանդեսներ՝ գյուղատնտեսության և անասնաբուծության, էներգետիկայի, առողջապահության և դեղագործության, ՏՏ, զբոսաշրջության, անշարժ գույքի ոլորտների, Հայաստանում գործող օտարերկրյա ընկերությունների պատմությունների մասին, ինչպես նաև այդ ոլորտների մի շարք ներդրումային նախագծեր:

Ներդրումային համաժողովի շրջանակներում կազմակերպվել է նաև շուրջ 100 գործարար երկուստեք հանդիպումներ (B2B) հայկական և արաբական գործարարների մասնակցությամբ:

Միջոցառումը նպաստել է մի շարք նոր առևտրային կապերի ստեղծմանը, որոնց ընդլայնման և արդյունավետ օգտագործման ուղղությամբ աշխատանքները շարունակվում են, ինչպես նաև ստորագրվել է 3 հուշագիր և 1 էքսկլյուզիվ պայմանագիր, մասնավորապես.

1. Հայաստանի Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության և ԱՄԷ «Ocean Holding» ՍՊԸ միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր, որը նպատակ ունի զարգացնելու Հայաստանում վերականգնվող էներգետիկայի ենթակառուցվածքները՝ ՀՀ-ում արևային էներգիայի ներդրումային նախագծերում «Ocean Holding» ընկերության մասնակցությամբ:

«Ocean Holding»-ը այս տարվանից սկսած, Հայաստանում մի քանի փուլով կներդնի 100 միլիոն ԱՄՆ դոլար՝ ֆոտովոլտային կայաններ կառուցելու և դրանք գործարկելու՝ օգտագործելով ոլորտի լավագույն հասանելի տեխնոլոգիաները:

2. «Հիդրո Կորպորացիա» ընկերությունների խմբի և «Estekshaf Investment Company»-ի միջև կնքվել է վերականգնվող էներգետիկայի, մասնավորապես հիդրոէներգետիկայի ոլորտում ներդրումների իրականացման փոխըմբռնման հուշագիր, որով նախատեսվում է ոլորտում լայնամասշտաբ և երկարաժամկետ ծրագրերի իրականացում: Նպատակը ցածր արտադրողականություն և վարկային ծանր պորտֆել ունեցող, բնապահպանական նորմերի խախտումներով կառուցված փոքր ՀԷԿ-երի արդիականացումն է: Ներկայումս բանակցություններ են իրականացվում «Դուբայ» ազատ տնտեսական գոտում համատեղ ընկերության գրանցման վերաբերյալ, որը հնարավորություն է ստեղծում աշխատելու 10-12 երկրների հետ:

3. Հայ-Էմիրաթական գործարար միությունը և «Natural Organic Healthy Food» (NOHF) ընկերությունը կնքել են հուշագիր՝ Հայաստանում օրգանական սննդի վերամշակման կենտրոնի բացման վերաբերյալ:

4. «Թամարա Ֆրութ» ՓԲԸ և «Natural Organic Healthy Food» (NOHF) ընկերության միջև կնքվել է բացառիկ պայմանագիր՝ արաբական վեց երկրներում բարձր կարգի հյուրանոցային ցանցերին օրգանական սնունդ մատակարարելու վերաբերյալ: Առաջին խմբաքանակը արտահանվել է 2017թ. ապրիլ ամսին:

5. «Լիկվոր» ընկերությունը Պարսից ծոցի երկրներում սկսել է դեղերի գրանցման գործընթացը, մասնավորապես Քուվեյթում, արդեն իսկ պատրաստվել են համապատասխան փաստաթղթերը:

6. 2017թ. ապրիլից մի քանի այցով Հայաստան են այցելել Աբու Դաբիի զարգացման հիմնադրամի ներկայացուցիչները, որոնք հանդիպումներ են ունեցել ինչպես ՀՀ գյուղատնտեսության նախարարության, այնպես էլ գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչների հետ:

7. Credit partner ընկերությունը համաժողովի արդյունքում ունի 4-5 պայմանավորվածություն: Արդեն իսկ կնքել է երկու պայմանագիր՝ խորհրդատվական ծառայությունների մատուցման վերաբերյալ:

8. Արդյունքներ կան նաև բանկային համակարգում (Պրոմեթեյ, Արմսվիսբանկ, Հայէկոնոմբանկ):

9. Մեղր արտադրող ընկերությունները (ԱՁ Արմեն Մելքոնյան, «Մուլտի Ագրո», ԱՁ Մանվել Մակարյան) 3 շահագրգիռ կազմակերպությունների հետ ձեռք են բերել նախնական պայմանավորվածություններ, նրանց տրվել են մեղրի նմուշներ՝ լաբորատոր փորձաքննություն անցկացնելու նպատակով: Ներկայումս ակնկալում են վերջիններիս արձագանքը, որից հետո՝ որպես հաջորդ քայլ, նախատեսվում է պայմանագրերի կնքում:

- **2017 թվականի հունիսի 6-8ը կազմակերպվել է հայկական 26 տեղական արտադրողների գործնական այցն Իտալիա՝** Հայ-իտալական միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստի շրջանակում կայացած «Հայաստան-Իտալիա» գործարար համաժողովին և երկկողմ գործնական հանդիպումներին մասնակցելու, ներդրումային ու գործարար կապերն ակտիվացնելու նպատակով:

Հայկական կողմից՝ ավելի քան 170 իտալացի գործընկերներին, ներկայացվել են բիզնես-ծրագրեր տարբեր ոլորտներում (գյուղմթերքի վերամշակման, վերականգնվող էներգետիկայի, SS, կոշիկի և տեքստիլ արդյունաբերության (սարքավորումներ), զբոսաշրջության), որտեղ հնարավոր է համատեղ շահավետ գործունեություն ծավալել:

Շահագրգիռ ընկերությունների միջև կազմակերպվել են հանդիպումներ՝ ներդրումային ծրագրերը և հայկական ապրանքների արտահանման հնարավորությունները քննարկելու նպատակով: Ներկայացվել է Հայաստանում իտալական «Ռենկո» և «Սարտիս» ընկերությունների հաջողության պատմությունը:

Համաժողովի շրջանակում Հայաստանի զարգացման հիմնադրամի և Իտալիայի առևտրի խթանման գործակալության (ICE) միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ երկկողմ առևտրատնտեսական կապերը զարգացնելու նպատակով: Հուշագրով կողմերը համաձայնել են ամրապնդել երկու երկրների գործարար շրջանակների համագործակցությունը, տեղեկատվություն փոխանակել առաջիկայում նախատեսվող միջոցառումների, գործարար այցերի, ցուցահանդեսների մասին, ինչպես նաև պայմանավորվածություն են ձեռք բերել անել հնարավորը՝ երկկողմ առևտրի և ներդրումների աճի խոչընդոտների նույնականացման և վերացման ուղղությամբ:

Միջոցառման արդյունքում.

- ✓ Գյումրու “Արշալույս” ԲԲ ընկերությունը քննարկել է նոր պատվերների ձեռքբերման հարցը,
- ✓ «Խաչատուրով Գրուպ» ընկերությունը Իտալական Blend- ընկերության հետ ձեռք է բերել նախնական պայմանավորվածություն Blend ընկերության հետ համապատասխան տեխնիկայի ձեռքբերման և իրենց ամբողջ արտադրությունը Հայաստան տեղափոխելու ուղղությամբ:
- ✓ «Յուքոմ» ընկերությունը հանդիպել է Telecom Italia Sparkle և Sirti իտալական ընկերությունների հետ, որոնցից մեկի մասով հնարավոր է տարանցիկ կապուղիների զարգացման մասով համագործակցության ընդլայնում: Ներկայումս ընթանում են բանակցություններ՝ պայմանագրի կնքման կամ համագործակցության մասին:
- ✓ «Էլբատ» ընկերությունը հանդիպել է իտալական մի քանի ընկերությունների հետ, որոնք հետաքրքրված են եղել իրենց արտադրանքով: Նախատեսվում է ընկերության ներկայացուցչի այցը գործարան, որից հետո առավել մանրամասն կքննարկվեն համագարծակցության եզրերը:
- ✓ «Հայէկոնոմբանկ» (Սիլ գրուպ) ընկերությունը հանդիպել է իտալական 4 ընկերությունների հետ, որի արդյունքում ներկայումս քննարկվում են ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերը:
- ✓ Թի-էս-դի ընկերությունը հանդիպել է մի շարք իտալական SS ոլորտի ընկերությունների հետ, սպասվում է մեկ ընկերության ներկայացուցիչների այցը Հայաստան՝ հետագ համագործակցության հնարավորությունների դիտարկման նպատակով:

- Ս.թ. հունիսի 14-ին Երևանում՝ Տաջիկստանի Հանրապետության Նախագահի պաշտոնական այցի շրջանակներում, կայացել է **Հայաստան-Տաջիկստան գործարար համաժողով: Համաժողովին մասնակցել են** հայկական և տաջիկական ավելի քան 150 ընկերությունների ներկայացուցիչներ:

Համաժողովի շրջանակներում կայացել են նաև մի շարք երկկողմ B2B հանդիպումներ, որոնց արդյունքում.

- ✓ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա»-ի և Կենտրոնասիական ֆոնդային բորսայի միջև ստորագրված հուշագրով կողմերը պայմանավորվել են խորացնել համագործակցությունն ու ակտիվացնել տեղեկատվության փոխանակումը առևտրի ոլորտում,
- ✓ «Արմեն Սանասարյան» կազմակերպությունը տաջիկական «Սիլկոտ-Բոյա» կազմակերպության հետ կնքել է 300 հազ ԱՄՆ դոլարի չափով ներկերի արտահանման պայմանագիր,
- ✓ Հայաստանի Արդյունաբերողների և Գործարարների միության և «Ֆուլուզոտի նոդիրի Տաջիկիստան» կազմկերպության միջև ստորագրվել է հուշագիր՝ լեռնահանքային արտադրանքի վերամշակման բնագավառում համագործակցության վերաբերյալ,
- ✓ «Օվալ Պլաստիկ» ՍՊ ընկերության և «Բարակատի Իսֆարա» կազմակերպության միջև ստորգրվել է համագործակցության հուշագիր՝ պլաստիկ տարաների արտահանման վերաբերյալ,
- ✓ «Սոնագրո» ՓԲ ընկերության և «Բարակատի Իսֆարա» կազմակերպության միջև ստորգրվել է համագործակցության հուշագիր՝ մրգային չրերի և ընկույզի ներմուծման վերաբերյալ,
- ✓ Հայկական «Aspar-Wild TOUR» և «SNABTOUR» կազմակերպությունները զբոսաշրջության ոլորտում համագործակցության հուշագրեր են ստորագրել՝ համապատասխանաբար «Տոչիկտուր» և «Կաֆոլատ» կազմակերպությունների հետ,
- ✓ Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանը և Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի կողմից հուշագիր է ստորագրվել «Տալկո» կազմակերպության հետ՝ հումքի վերամշակման նոր ինտենսիվ տեխնոլոգիաների մշակման բնագավառում համագործակցության շուրջ,
- ✓ Տաջիկստանից ժամանած գործարարներին առաջարկվել է մասնակցել ս.թ. հուլիսի 7-9 Երևանում կայանալիք «Ոսկերչության օրեր ՀՀ-ում» միջոցառմանը, որի շրջանակներում ակնկալվում է կողմերի միջև ստորագրել համագործակցության վերաբերյալ համապատասխան հուշագիր:

- Սույն թվականի հունիսի 28-ին Շվեյցարիայի Ցյուրիխ քաղաքում կայացած Շվեյցարիա-Հայաստան Առևտրային պալատի բացման արարողության և դրա շրջանակներում գործարար համաժողովին շվեյցարացի գործարարներին ներկայացնել Հայաստանի ներդրումային և գործարար միջավայրը, ՀՔՀ ներկայացուցչի մասնակցությամբ կայացել են մի շարք երկուստեք հանդիպումներ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ գործարար կապերի ստեղծման և հետագայում համագործակցության նպատակով:
- Ս.թ. օգոստոսի 22-ին ԱՄՆ Լոս Անջելես քաղաքում տեղի ունեցած՝ բիզնես առաջնորդների կլոր սեղան- քննարկման ընթացքում Հայաստանի զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Արմեն Ավակ Ավակյանը հանդես է եկել Հայաստանի ներդրումային հնարավորությունների շնորհանդեսով: Ամերիկյան միջին և խոշոր բիզնեսի առաջնորդների հետ քննարկվել են նաև մի շարք ներդրումային ծրագրեր:

Ներդրումային միջոցառումը տեղի է ունեցել Լոս Անջելեսում ՀՀ գլխավոր հյուպատոսության նախաձեռնությամբ, մասնակցել են Լոս Անջելեսի և Օրընջ մարզերի, Գլենդեյլ և Լոս Անջելես քաղաքների առևտրի պալատների ղեկավարները, բիզնես ոլորտի խորհրդատվական կառույցների անդամներ, ամերիկյան խոշոր և միջին ընկերությունների ղեկավարներ:

Հիմնադրամի գործադիր տնօրենն ամերիկյան բիզնեսի առաջնորդներին է ներկայացրել 450 միլիարդ դոլարի ՀՆԱ-ով Իրանի և 3 տրիլիոն դոլարի ՀՆԱ-ով ԵԱՏՄ շուկաների միջև կարևոր հարթակ հանդիսանալու՝ Հայաստանի պատրաստակամությունը: Բացի այդ, բիզնես առաջնորդների կլոր սեղան-քննարկման ընթացքում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Ներդրումային քաղաքականության բաժնի ղեկավար Վահագն Լալայանը ներկայացրել է Հայաստանում doing business-ի պայմանները, բարենպաստ առևտրային ռեժիմները ԵՄ ու ԵԱՏՄ երկրների հետ: Միջոցառման հեռարձակման տեսագրությունը՝ այստեղ. https://armeniatv.am/hy/63121-63121

- Ս.թ. օգոստոսի 24-26-ը Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում մեկնարկել է «Եվրասիական շաբաթը», որին երկրի պաշտոնական պատվիրակության կազմում մասնակցում են ՀՔՀ ներկայացուցիչները: Ցուցահանդեսային համաժողովին Հայաստանի զարգացման հիմնադրամի և GIZ-ի՝ «Սիրիացի փախստականների

տնտեսական ինտեգրում Հայաստանում» ծրագրի աջակցությամբ ինտերակտիվ ձևաչափով ներկայացված են արտահանման ներուժ ունեցող 50 հայկական ընկերություններ՝ SS, սննդի վերամշակման, ոսկեգործության, ադամանդագործության, ժամագործության, դեղագործության ու թեթև արդյունաբերության ոլորտներից:

Ինտերակտիվ ցուցադրությունը միավորում է 300-ից ավելի ընկերությունների՝ ԵԱՏՄ երկրներից, որոնք միասնական տաղավարում զետեղված touchpad-երի միջոցով հանդիպումների կարող են հրավիրել պոտենցիալ գործընկերներին: Իսկ էլեկտրոնային համակարգի միջոցով համաժողովի մասնակից ընկերություններից շատերը նախապես են B2B հանդիպումներ նշանակել իրենց նախընտրած ընկերության ներկայացուցիչների հետ՝ տարբեր երկրներից: Ցուցահանդեսի հենց առաջին օրվանից Հայաստանի տաղավարի շուրջ նկատելի ակտիվություն է:

Գործնական ծրագրի շրջանակում ընթանում են կլոր սեղաններ, թեմատիկ քննարկումներ, ինտերակտիվ շնորհանդեսներ, որոնց մասնակիցները նոր արդյունավետ ուղիներ են փնտրում ԵԱՏՄ միասնական շուկաների հետագա ձևավորման և արդյունաբերող ձեռնարկությունների միջև արտադրական կոոպերացիայի զարգացման հնարավորությունների համար:

- Հայաստանի զարգացման հիմնադրամի աջակցությամբ և Հնդկաստանի արդյունաբերական ասոցիացիայի նախաձեռնությամբ սեպտեմբերի 28-ին Երևանում կազմակերպվել է Հայաստան-Հնդկաստան համաժողովը՝ երկու երկրների գործարարների միջև բիզնես կապերի ստեղծման, ներդրումների ներգրավման և առևտրաշրջանառության խթանման նպատակով: Համաժողովին մասնակցում են ավելի քան 50 գործարարներ երկու երկրներից: Հնդկաստանի Արդյունաբերական ասոցիացիայի պատվիրակության կազմում Հայաստան են ժամանել Հնդկաստանի վերականգնվող էներգետիկայի, դեղագործության, տեղեկատվական տեխնոլոգիաների, զբոսաշրջության և այլ ոլորտներում գործող 20 ձեռներեցներ: Տեղի են ունեցել B2B հանդիպումներ: Գործարար այցի շրջանակում Հայաստանի զարգացման հիմնադրամի մասնագետների ուղեկցությամբ հնդիկ գործարարները այցելել են մեր երկրի արտահանման և ներդրումային ներուժ ունեցող ձեռնարկություններ, քննարկել հետագա համագործակցության հնարավորություններ:

• Հայաստանի զարգացման հիմնադրամի աջակցությամբ սեպտեմբերի 29-ին կազմակերպվել է Ճապոնիայի ինֆորմացիոն և բարձր տեխնոլոգիաների ոլորտը ներկայացնող 6 ընկերությունների ներկայացուցիչների գործարար այցը Հայաստան: Հանդիպումների մեկնարկը տրվել է հիմնադրամում, որտեղ ՀԶՀ գործադիր տնօրեն Արմեն Ավակ Ավակյանը ներկայացրել է մեր երկրի մակրոտնտեսական պայմաններն ու հիմնադրամի աջակցության գործիքները : ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Ներդրումային ծրագրերի և պետություն-մասնավոր գործակցության բաժնի ղեկավար Արամ Վարդանյանը ներկայացրել է Հայաստանում գործող ազատ տնտեսական գոտիների հնարավորությունները: Ճապոնացի գործարարները մասնակցել են նաև «Դիջիթեք» 13-րդ տեխնոլոգիական ցուցահանդեսին, B2B հանդիպումներ ունեցել հայաստանյան գործընկերների հետ :

• Հոկտեմբերի 3-ից 5-ը Երևանում կազմակերպվել է «Հայաստան-Ֆրանսիա» գործարար համաժողովը, որին մասնակցել են շուրջ 30 գործարար երկու երկրներից: Համաժողովը կազմակերպվել է Ֆրանսիայի Փոքր և միջին ձեռնարկությունների կոնֆեդերացիայի միջազգային հարցերի պատասխանատու փոխնախագահ, Օվերնյ-Ռոն Ալպ շրջանի գործարար պատվիրակության տարածաշրջանային այցի շրջանակում: Փոքր և միջին ձեռնարկությունների կոնֆեդերացիան Ֆրանսիայում ազգային և տարածաշրջանային մակարդակներում գործող կառույց է, որն աջակցում է ՓՄՁ-ներին՝ գտնելու նոր շուկաներ, կատարելու ներդրումներ, ինչպես նաև խրախուսում է արտահանումը: Համաժողովի շրջանակում կազմակերպվել են B2B հանդիպումներ, որոնց ընթացքում դեղագործական, ալկոհոլային խմիչքների, խորհրդատվական բիզնեսի, կառուցապատման, ճարտարապետա-շինարարական նախագծման, անշարժ գույքի, չրերի արտադրության, գյուղմթերքի վերամշակման ոլորտի ընկերությունները քննարկել են գործարար ծրագրեր և նոր կապեր են հաստատել:

• Հոկտեմբերի 4-ին Հայաստանի զարգացման հիմնադրամը Հայաստանում Չեխիայի դեսպանության հետ համագործակցությամբ կազմակերպել են «Հայաստան-Չեխիա» գործարար համաժողովը, որը տեղի է ունեցել Չեխիայի խորհրդարանի Սենատի նախագահ Միլան Շտեխի պաշտոնական այցի շրջանակում: Հայաստանի զարգացման հիմնադրամը և Չեխիայի Արդյունաբերության կոնֆեդերացիան մեկ հարթակում հավաքված հայ և չեխ գործարարներին ներկայացրել են երկու երկրների

ներդրումային և արտահանման հնարավորությունները, տնտեսությունների վերջին զարգացումները, գերակա ոլորտները: Համաժողովի մասնակիցները նշել են, որ Հայաստանի և Չեխիայի միջև տնտեսական կապերը զարգանում են, որի ապացույցը վերջին տարում ապրանքաշրջանառության 60 տոկոսի աճն է: Կազմակերպվել են նաև B2B հանդիպումներ՝ իրավաբանական, ֆինանսական, առևտրի և բիզնես խորհրդտվության, ճարտարագիտության, SS, էներգետիկ ենթակառուցվածքների, տրանսպորտի, բուժտեխնիկայի արտադրության, սննդարդյունաբերության, տեքստիլ ոլորտները ներկայացնող հայ և չեխ ձեռներեցների միջև, որոնք քննարկել են գործարար ծրագրեր:

II. Մշակող արդյունաբերության ոլորտների ընկերություններին օժանդակության ցուցաբերում՝ ֆինանսական գործիքների կիրառմամբ

2.1 արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում.

Ենթածրագրի ներքո իրականացվել է սուբսիդավորված կազմակերպությունների մոտ սուբսիդավորման պայմաններին համապատասխանելը բացահայտելու նպատակով ուսումնասիրություն և նախորդ տարիներին տրամադրված վարկերի սուբսիդավորման սպասարկում: Մասնավորապես, սուբսիդավորման պայմաններին չհամապատասխանելու հետևանքով դադարեցվել է թվով 4՝ «Գոլդեն Հարվիսթ» ՍՊ, «Մէգա Արարատ» ՓԲ, «Մխչյան Ֆիշ» ՍՊ և «Ավելիաց» ՍՊ ընկերությունների վարկի սուբսիդավորումը:

Միաժամանակ, 2017 թվականի համար հաստատված համապատասխան ծրագրի բացակայության հետևանքով մերժվել է երկու կազմակերպության վարկի սուբսիդավորման հայտ:

Այլ աշխատանքներ չեն իրականացվել:

2.2 օտարերկրյա պետությունում սերտիֆիկացման և դեղերի գրանցման համաֆինանսավորում.

Ենթածրագրի ներքո աշխատանքներ չեն իրականացվել:

III. Հայկական ապրանքների՝ նպատակային շուկաներում առաջմղում, հայկական ապրանքների ներկայացում, շուկայական տեղեկատվության ապահովում

3.1 Ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցության ապահովում

Ենթածրագրի շրջանակներում իրականացվում է թիրախային շուկաներում և Հայաստանում մշակող արդյունաբերության ոլորտների կազմակերպություններին ցուցահանդեսներին մասնակցության աջակցության տրամադրում, մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում.

արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը Հիմնադրամին տրամադրվում է պաշտոնական գրագրության միջոցով և աշխատանքային կարգով, թարմացվում և ամփոփվում է եռամսյակային պարբերականությամբ

- **«PRODEXPO 2017», ՌԴ, ք. Մոսկվա, 2017 թ. փետրվարի 6-10-ը կայացած** ցուցահանդեսին ներկայացված են եղել շուրջ 2200 ներկայացուցիչ 58 երկրներից, 29 ազգային տաղավար, ցուցահանդես այցելել են շուրջ 61 հազար մարդ:

Նախորդ տարվա համեմատ ցուցահանդեսի այցելուների թիվը աճել է ավելի քան 12%-ով: Ցուցահանդեսը հանդիսանում է սննդարդյունաբերության բնագավառի ՌԴ ամենամեծ ճանաչում ունեցող միջոցառումը, որի հիմնական այցելուներն են ՌԴ շուկայում առևտրային դիստրիբյուտորներ, սննդարդյունաբերության ոլորտում միջին և խոշոր գնորդներ, այդ թվում տարբեր առևտրային ցանցերից:

Միջոցառմանը կազմակերպվել է 23 հայկական ընկերությունների (այդ թվում 6 նոր արտահանող) մասնակցություն՝ մեկ միասնական հայկական տաղավարի ձևաչափով («Արտաշատ Վինկոն» ՓԲԸ, «Արցախ բրենդի կոմպանի» ՓԲԸ, Արարատի «Աբրիկոն» ՍՊԸ, «Մերձավանի կոնյակի գործարան» ՍՊԸ, «Երևանի գարեջուր» ՓԲԸ, «Էկովեկ» ՍՊԸ, «ՍԻՍ Նատուրալ» ՓԲԸ, «ՎՎՎ Գրուպ» ՍՊԸ, «Եղեգնաձորի պահածոների գործարան» ՍՊԸ, «Վիլ ֆուդ» ՍՊԸ, «Արմգար Պրոդ» ՍՊԸ, «Ագրար Արմավիր» ՍՊԸ, «Ոսկեհատ պահածո» ՍՊԸ, «Ա/Ձ Համլետ Հովսեփյան», «Դուստր Մարիաննա» ՍՊԸ, «Սան ֆուդ» ՍՊԸ, «Թության» ՍՊԸ, «Սևանի իշխան» ՓԲԸ, «Նատֆուդ» ՓԲԸ, «Արսսի Ալյանս» ՍՊԸ, «Մէգա Արարատ» ՓԲԸ, «ԱԲԴԱ» ՍՊԸ, «Սոնագրո» ՓԲԸ):

Հայ արտադրողները հանդիպել և կապեր են ստեղծել շուրջ 520 հնարավոր գործընկերների հետ, այդ թվում՝ «Азбука Вкуса», «Дикси», «Дары Армении», «Гранд Стар», «Бухта», «Сербский Торговый Дом», «Лента», «METRO», «X5 Retail Group», «Food City», «Mega Food», «OptiTrade», «Bash» և այլ առևտրային ցանցերի ու անհատների հետ:

Մասնակցության արդյունքում թվով 17 կազմակերպություն կնքել են 45 արտահանման պայմանագիր՝ մոտ 2.43 մլրդ ՀՀ դրամի չափով:

Հայկական կազմակերպությունները տեղի ունեցած մրցույթներ արժանացել են մի շարք պարգևների:

- **2017 թվականի փետրվարի 14-17 ՌԴ Մոսկվա քաղաքում կայացած «Текстильлегпром 2017» 48-րդ մեծածախ տոնավաճառ-ցուցահանդեսին** կազմակերպվել է հինգ հայկական ընկերությունների մասնակցությունը («Լենտեքս» ՍՊԸ, «Հելլո» ՍՊԸ, «Արշալույս» ԲԲԸ, «Ալեքս Տեքստիլ» ՍՊԸ, «Մոսինի» ՍՊԸ), որոնք ներկայացրել են տրիկոտաժի, գուլպեղենի, տնային և սպորտային հագուստի, հավաքածուներ:

Ցուցահանդեսը հանդիսանում է տեքստիլ և թեթև արդյունաբերության սարքավորումների և արտադրանքի Ռուսաստանի խոշորագույն միջոցառումներից մեկը, որն անցկացվում է տարեկան երկու անգամ ՌԴ Մոսկվա քաղաքում՝ փետրվար և սեպտեմբեր ամիսներին:

Ցուցահանդեսին մասնակցում են ավելի քան 2000 ընկերություններ աշխարհի 35 երկրներից և ավելի քան 25000 այցելու՝ մեծածախ գնորդներ և ոլորտի մասնագետներ, առևտրային դիստրիբյուտորներ, տարբեր առևտրային ցանցեր:

Մասնակցության արդյունքում հանդիպումներ և կապեր են ստեղծել շուրջ 240 հնարավոր գործընկերների հետ, թվով 4 կազմակերպություն կնքել են 10 արտահանման պայմանագիր՝ մոտ 410 մլն ՀՀ դրամի չափով:

- **2017 թվականի մարտի 14-17-ը ՌԴ Մոսկվա քաղաքում կայացած «Мосшуз» ցուցահանդեսը** կոշիկի և կաշվե պարագաների արտադրության Ռուսաստանի և Արևելյան Եվրոպայի խոշորագույն ցուցահանդեսն է, որն անցկացվում է տարեկան չորս անգամ ՌԴ Մոսկվա քաղաքում՝ հունվար, մարտ, հունիս և սեպտեմբեր ամիսներին:

Ցուցահանդեսին մասնակցում էին ավելի քան 300 կոշիկ և կաշվե պարագաներ արտադրող առաջատար կազմակերպություններ ավելի քան 20 երկրներից, որոնք

ներկայացնում են համաշխարհային ճանաչում ունեցող ապրանքանիշների արտադրանք: Ցուցահանդես տարեկան այցելում է ավելի քան 10 հազ. մարդ՝ հիմնականում ոլորտի մեծածախ գնորդներ և մասնագետներ, խոշոր և միջին առևտրային ցանցերի ու դիստրիբյուտորական ընկերությունների ներկայացուցիչները:

Ցուցահանդեսին մասնակցեցին կոշիկ և կաշվե պարագաներ արտադրող տաս հայկական ընկերություններ (այդ թվում 5 նոր արտահանող)՝ «Զեննի» ՍՊԸ, «Մաքսոլ» ՍՊԸ, «Ավա Շուզ» ՍՊԸ, «Վարդան և Պետրոս Գևորգյան» ՍՊԸ, «Սիմար» ՍՊԸ, «Երամար» ՍՊԸ, «Արմա Լեդեր» ՍՊԸ, ԱՁ Արսեն Բադիկյան, ԱՁ Կարեն Թարվերդյան, ԱՁ Տիգրան Սիմոնյան:

Մասնակցության արդյունքում հանդիպումներ և կապեր են ստեղծել շուրջ 220 հնարավոր գործընկերների հետ, թվով 7 կազմակերպություն կնքել են 20 արտահանման պայմանագիր՝ մոտ 305 մլն ՀՀ դրամի չափով:

- **2017 թվականի ապրիլի 6-9-ը** Ղազախստանի Հանրապետության՝ Ալմաթի քաղաքում կայացած ամենամյա **«ԱՌՈՒ» 28-րդ միջազգային մասնագիտացված ոսկերչական** ցուցահանդեսին կազմակերպվել է հայկական վեց կազմակերպությունների մասնակցությունը («Ագոփյան Ջուելրզ» ՓԲԸ, Երևանի Ոսկերչական Գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ, «Ջեյ Սի Էյ ոսկերչական ընկերություն» ՓԲԸ, «Միտարիո Գոլդ» ՍՊԸ, ԱՁ «Արտակ Բոջիկյան» ԱՁ «Մարգարյան Անահիտ»):

Մասնակցության արդյունքում հանդիպումներ և կապեր են ստեղծել շուրջ 190 հնարավոր գործընկերների հետ, թվով 6 կազմակերպություն կնքել են 6 արտահանման պայմանագիր, ինչպես նաև ունեցել են տեղում վաճառք՝ ընդհանուր մոտ 176 մլն ՀՀ դրամի չափով:

- Աշխատանքներ են իրականացվում Հիմնադրամի և ԻԻՀ Ցուցահանդեսների Կենտրոնի միջև 2016 թվականին ստորագրված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում իրանական կողմի համար համապատասխան ցուցահանդեսային տարածքի ապահովման ուղղությամբ՝ 2017 թվականի սեպտեմբերի 22-25-ը իրանական ապրանքների ցուցահանդեսի կազմակերպման նպատակով:

- **2017 թվականի օգոստոսի 29**-ից սեպտեմբերի 1-ը ՌԴ Մոսկվա քաղաքում կայացած **«Текстильлегпром 2017»** 48-րդ մեծածախ տոնավաճառ-ցուցահանդեսին

կազմակերպվել է վեց հայկական ընկերությունների մասնակցությունը՝ «Լենտեքս» ՍՊԸ, «Հելլո» ՍՊԸ, «Արշալույս» ԲԲԸ, «Ալեքս Տեքստիլ» ՍՊԸ, «Ֆիրմա Լիդա» ՍՊԸ և ԱՁ Կամսար Դարբինյան: Ցուցահանդեսին մասնակցությունը իրականացվել է միասնական հայակակն տաղավարով, որի համար վարձակալվել է 89.25 քմ տարածք: Ցուցահանդեսի ընթացքում իրականացվել են մի շարք հանդիպումներ ներուժային գնորդների և ոլորտի ներկայացուցիչնեչի հետ: Մասնակցության արդյունքում հայկական ընկերությունները կնքել են 160 մլն ՀՀ դրամի արտահանման պայմանագրեր, առաջիկայում նախատեսվում է կնքել ևս 155 մլն ՀՀ դրամի պայմանագրեր:

- **2017թ. սեպտեմբերի 5-ից 8-ը** ՌԴ Մոսկվա քաղաքում կայացած **«Мосшуз»** ցուցահանդեսին իրականացվելէ 8 հայկական ընկերությունների մասնակցություն՝ «Զեննի» ՍՊԸ, «Քեյ ընդ քեյ շուզ» ՍՊԸ, «Սիմար» ՍՊԸ, «Արմա Լեդեր» ՍՊԸ, «Բաբիննի» ՍՊԸ, ԱՁ Արսեն Բադիկյան, ԱՁ Կարեն Թարվերդյան, ԱՁ Տիգրան Սիմոնյան: Ցուցահանդեսին մասնակցությունը իրականացվել է միասնական հայակակն տաղավարով, որի համար վարձակալվել է 120քմ տարածք: Ցուցահանդեսի ընթացքում իրականացվել են մի շարք հանդիպումներ պոտենցիալ գնորդների և ոլորտի ներկայացուցիչնեչի հետ: Մասնակցության արդյունքում թվով 6 կազմակերպություն կնքել են շուրջ 212 մլն ՀՀ դրամի արտահանման պայմանագրեր, առաջիկայում նախատեսվում է կնքել ևս 164 մլն ՀՀ դրամի պայմանագրեր:

- **2017թ. սեպտեմբերի 11-14-ը** ՌԴ Մոսկվա քաղաքում կայացած **«WorldFood Moscow 2017»** սննդարդյունաբերության բնագավառի միջազգային ցուցահանդեսին մեկ միասնական «Հայկական» տաղավարով (150 ք.մ) կազմակերպվել է հայկական 16 ընկերությունների մասնակցությունը՝ «Երևանի գարեջուր» ՓԲԸ, «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ, «Եվրոթերմ» ՓԲԸ, «ՍԻՍ նատուրալ» ՓԲԸ, «Գոլդեն Հարվիսթ» ՍՊԸ, «Տրիումֆ գրուպ» ՍՊԸ, «Համլետ Հովսեփյան» ԱՁ, «Արկոլադ» ՓԲԸ, «Նատֆուդ» ՓԲԸ, «Դուստր Մարիաննա» ՍՊԸ, «Սևանի իշխան» ՓԲԸ, «ՌՌՌ» հանքային ջրերի գործարան ՓԲԸ, «ԱՆԴ» ՍՊԸ, «Ագրոլոգ» ՓԲԸ, «Սանգուդս» ՍՊԸ, «Անթառամ» ԱԿ: Նախորդ ցուցահանդեսի արդյունքում մասնակից ընկերությունները կնքել են 12

պայմանագիր՝ 569,300,000 ՀՀ դրամ արժողությամբ: Հայաստանի զարգացման հիմնադրամը համագործակցելով Ավստրիական զարգացման գործակալության Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնության ծրագրի հետ վերոնշյալ ցուցահանդեսին միասնական հայկական տաղավարում առաջին անգամ ներկայացրել է 6 ընկերությունների («Եվրոթերմ» ՓԲԸ, «ՍԻՍ նատուրալ» ՓԲԸ, «ԱՆԴ» ՍՊԸ, «Ագրոլոգ» ՓԲԸ, «Սանգուդս» ՍՊԸ, «Անթառամ» ԱԿ) օրգանական սննդամթերքները:

Ցուցահանդեսի ընթացքում հայկական տաղավարում իրականցվել է համտես, որի ընթացքում ներկայացրել են ռուսական շուկայի համար նախատեսվող նոր ապրանքատեսակներ, իսկ «Դուստր Մարիաննա» ընկերությունը WorldFood Moscow 2017-ի շրջանակներում կազմակերպված «Витрина Новинок» նոր ապրանքների համար նախատեսված մրցույթին ներկայացրել է 6 ապրանքատեսակ:

«Հայկական» տաղավարը արժանացել է ցուցահանդեսի «Լավագույն տաղավար» մրցանակի:

Հայկական ընկերությունները ցուցահանդեսի շրջանակներում արժանացել են մի շարք մրցանակների, մասնավորապես՝ «Տարվա ապրանքատեսակ»՝ սննդի և խմիչքների միջազգային մասնագիտացված համտես-մրցույթի արդյունքում «Դուստր Մարիաննա» ընկերությունն արժանացել է 1 բրոնզե, 1 արծաթե և 1 ոսկե մեդալների, իսկ «Սևանի իշխան» ընկերությունը՝ ոսկե մեդալի, «Ավելիաց» և «Երևանի գարեջուր» ընկերության ապրանքատեսակները հաջողությամբ անցել են որակի և անվտանգության վերահսկողության ստուգումը՝ արժանանալով բարձր՝ «A» կարգի:

Ցուցահանդեսին տարեկան մասնակցում են շուրջ 1500 կազմակերպություններ՝ ավելի քան 65 երկրներից, իսկ այցելուների թիվը կազմում է շուրջ 29 հազ. մարդ:

Մասնակցության արդյունքում թվով 8 կազմակերպություն կնքել է ավելի քան 315,8 մլն. ՀՀ դրամի 16 պայմանագրեր

• **Սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 1-ը** Հայաստանի զարգացման հիմնադրամի աջակցությամբ ոսկեգործական 5 հայկական ընկերություն մասնակցել է **«JUNWEX Moscow»** միջազգային ցուցահանդեսին, ստանալով 1.2 միլիոն դոլարի արտահանման պատվերներ: Հայկական ընկերությունները ցուցահանդեսի օրերին հիմնականում

ռուսական մեծածախ գնորդների հետ կնքել են արտահաման 5 պայմանագիր, ևս 16-ը բանակցությունների փուլում են, որոնք էականորեն կավելացնեն «JUNWEX Moscow-2017»-ին կնքված արտահանման պայմանագրերի ընդհանուր ծավալը: Հայկական թանկարժեք զարդերն ընդունվել են նաև ցուցահանդեսի ոչ մասնագիտացած այցելուների շրջանում, որոնք ձեռք են բերել 34 000 դոլարի թանկարժեք զարդեր:

3.2 Օտարերկրյա պետությունում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների կազմակերպում և իրականացում

Ենթածրագրի շրջանակներում իրականացվում է գովազդային արշավների կազմակերպում, այդ թվում՝ հայկական արտադրանքի վերաբերյալ բուկլետների և կատալոգների հրատարակում, էլեկտրոնային ռեսուրսների պատվիրում, արտահանման շուկաների վերաբերյալ տեղեկատվական նյութերի ձեռքբերում և տրամադրում ընկերություններին, հայկական բրենդների ձևավորման, օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում հայկական արտադրանքի համտեսների, շնորհանդեսների, մրցույթների և նորաձևության ցուցադրությունների, «ԷՔՍՊՈ» միջազգային ցուցահանդեսներում Հայաստանի Հանրապետության մասնակցության աշխատանքների կազմակերպման և(կամ) իրականացման, ինչպես նաև այլ նմանատիպ միջոցառումների մասնակցության և(կամ) կազմակերպմանն աջակցություն:

- 2017 թվականի մարտի 22-ին Աբու Դաբիում կազմակերպված «Հայաստան-Արաբական Միացյալ Էմիրություններ» ներդրումային համաժողովի շրջանակներում կազմակերպվել հայկական ապրանքների համտես միջոցառում, որին ներկայացվել են բնական աղբյուրի ջրեր, օրգանական հյութեր, կոմպոտներ, մրգային պահածոներ, մեղր, շոկոլադ, չրեր և թարմ մրգեր արտադրող ավելի քան 10 ընկերության արտադրանք:

Համտես միջոցառման հյուրերին է ներկայացվել արտադրանքի որակական, համային առանձնահատկությունների, ինչպես նաև դեպի տվյալ շուկա արտահանման հնարավորությունները:

- «Հայաստան-Արաբական Միացյալ Էմիրություններ» ներդրումային համաժողովի շրջանակներում շահագրգիռ կազմակերպություններին ՀՀ տնտեսության, դրա առանձին ոլորտների մասին տեղեկատվություն տրամադրելու նպատակով մշակվել և տպագրվել են մի շարք տեղեկատվական նյութեր, մասնավորապես, ներդրումային ծրագրերի տեղեկատվական գրքույկներ, ինչպես նաև ագրոսննդարդյունաբերության, տրանսպորտի և կապի, ֆինանսական շուկայի և էներգետիկայի ուղղությունների վերաբերյալ:

3.3 Գործարար կապերի հաստատում

- 2017թ. հունիսի 26-ից 29-ը կազմակերպվել է «Դանիայի նորաձևություն և տեքստիլ» (Dansk Fashion & Textile) ասոցիացիայի ներկայացուցիչների՝ արտաքին կապերի և հաղորդակցության պատասխանատուների ճանաչողական այցը Հայաստան:

Ասոցիացիայի ներկայացուցիչների համար կազմակերպվել են այցելություններ հետևյալ հայկական հինգ ընկերություններ՝ Վանաձորի «Գլորիա» կարի ֆաբրիկա և Բազում կարի արտադրական ձեռնարկություն, Գյումրիի «Արմտեքս Գրուպ» ընկերություն, ինչպես նաև Երևանի «Ալեքս Տեքստիլ» և «Նանման» ընկերություններ:

Այցի հիմնական նպատակն էր գնահատել թեթև արդյունաբերության ոլորտի ներկայիս իրավիճակը, զարգացման ներուժն ու հնարավորությունները: Ընկերություններում փորձագետները մանրամասն տեղեկություններ ստացան վերջիններիս գործունեության վերաբերյալ և ուսումնասիրեցին արտապատվիրման հնարավորությունները:

Դանիացի գործընկերները կկազմեն հաշվետվություն այցելության արդյունքների վերաբերյալ և այն կներկայացնեն «Դանիայի նորաձևություն և տեքստիլ» (Dansk Fashion & Textile) ասոցիացիայի անդամներին, որոնց կարծիքների արդյունքում կուրվագծվեն նաև հետագա համագործակցության հնարավորությունները: Միաժամանակ Դանիայի «Textuelt» ամսագրում՝ ոլորտի 6000 մասնագետ-բաժանորդների համար կտպագրվի հոդված այցելության վերաբերյալ:

• Հայաստանի զարգացման հիմնադրամի հրավերով հոկտեմբերի 3-ից 5-ը Հայաստան են այցելել քաղաքաշինության և զբոսաշրջության ուղղությունների ծրագրման ոլորտում հեղինակավոր «AECOM», «ARUP», «ERGA» և «SWA» ընկերությունների ներկայացուցիչները՝ «Նոյ» էթնոգրաֆիկ թաղամասի ճարտարապետական և բիզնես պլանավորման մրցույթին մասնակցելու նպատակով: Ամերիկյան «AECOM», բրիտանական «ARUP», լիբանանյան «ERGA» և ամերիկյան «SWA» ընկերությունները միջազգային առաջատար փորձ ունեցող կազմակերպություններ են, որոնք զբոսաշրջային ուղղությունների ծրագրման 30-60 տարվա հաջող փորձ ունեն : Հայաստանում գտնվելու 3 օրերին օտարերկրյա մասնագետները «Նոյ» էթնոգրաֆիկ թաղամասի ներդրումային ծրագիրը համակարգող ՀԶՀ թիմի և «Դալմա Գարդեն Մոլի» սեփականատեր, «Կումայրի» ներդրումային ֆոնդի կառավարիչ «Դալմա ինվեստ» ընկերության մասնագետների ուղեկցությամբ այցելել են Հայաստանի տարբեր տարածաշրջաններ՝ ծանոթանալով ճարտարապետական ոճերին և մշակութային յուրահատկություններին:

• Բալթյան երկրներում Հայաստանի զարգացման հիմնադրամի պաշտոնական ներկայացուցիչ Ռենա Սարիբեկյանի նախաձեռնությամբ հոկտեմբերի 4-5 լիտվական «Omniteksas» և «Tributum» ընկերությունների ղեկավարներն այցելել են Հայաստան և ծանոթացել տեղական ընկերությունների արտահանման ներուժին: Լիտվացի գործարարները շրջայց են կատարել «Գլորիա», «ԱրմՏեքս Գրուփ», «Ալեքս Տեքստիլ» ընկերությունների ֆաբրիկաներում, ծանոթացել արտադրական գործընթացին ու տեսականուն: «Omniteksas» և «Tributum» ընկերությունների ղեկավարները Հայաստանում հետաքրքրված են տեքստիլի խոշոր արտադրություններով, որոնք մեծածավալ պատվերներ իրականացնելու կարողություններ ունեն: Հայկական ֆաբրիկաները լիտվական ընկերությունների պատվերով կսկսեն փորձանմուշների արտադրություն, որից հետո կհստակեցվեն պատվերների ծավալը, գինը և ժամկետները: «Omniteksas»-ը և «Tributum»-ը տեքստիլի ոլորտում գործող շուրջ 20 միլիոն եվրոյի շրջանառություն ունեցող լիտվական առաջատար ընկերություններ են, որոնք զբաղվում են տրիկոտաժե հագուստի արտադրությամբ: Ընկերություններն

աշխատում են համաշխարհային հայտնի ապրանքանիշերի հետ, իսկ արտահանման շուկաներն ընդգրկում են Իսպանիան, Ֆրանսիան, Գերմանիան և Սկանդինավյան երկրները: Գործարարների այցը կազմակերպվել է Լիտվայում Հայաստանի դեսպանի աջակցությամբ:

IV. Ուսումնական դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում.

Ենթածրագրի ներքո աշխատանքներ չեն իրականացվել:

V. Արտահանման բնագավառում ծագող խնդիրների և դրանց լուծմանն ուղղված հետազոտության իրականացում.

Ենթածրագրի ներքո աշխատանքներ չեն իրականացվել: